



Նոր

ՃՐԱԳ

8

Ը.Տարի : Թիւ 2

Եռամսեայ թերթիկ

Ապրիլ 2022

Հրատարակութեամբ

Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ Մեկուսի շրջանի վարչութիւն



Ժամկէտը հասնելու է

Սիրելի Ճրագի ընթերցողներ , Հայրենակիցներ , քոյրեր եւ
եղբայրներ .

Մեծ ուրախութեամբ ձեզ կը տեղեկացնենք թէ Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ-
ի նորակառոյց շէնքի աշխատանքները իր աւարտին հասած է եւ
պահն եկած է շէնքի հանդիսական բացումին:

Այսու մեծ սիրով եւ հպարտութեամբ ձեզ կը հրաւիրենք ներկայ
գտնուելու միութեանս այս պատմական պահին:

Հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Մայիս 7 . 2022 Թ. Ժամը
13:00-ին նորակառոյց շէնքէն ներս :

Ուրախութեամբ ընկալելու ենք ձեր բոլորին:

Հ.Մ.Ը.Մ.-ական բարեկներով

Հ.Մ.Ը.Մ. Ալմելօ մեկուսի Շրջանի վարչութիւն





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՄԱՐԶԻԿ» Ի ԹԻԻ 423-Ի ՃԱՆՉՆԱՂՂ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 1911-ին, երբ հազիւ քսանհինգ զարուններ բոլորած Շաւարշ Քրիսեան Պոլսոյ մէջ յանդգնութիւնը ունեցաւ Օսմանեան կայսրութեան առաջին մարզական թերթը՝ «Մարմնամարզ»ը հիմնելու, շատեր թերահաւատութեամբ ընդունեցին լոյսաշխարհ եկող նախաձեռնութիւնը:

Նոյեմբեր 1918-ին, երբ Քրիսեանի նահատակութենէն երեք տարի ետք, անոր երբեմնի գործակիցները որոշեցին ձեւ ու մարմին տալ հայ մարմնակրթութեան մեծ երախտաւորին երազին եւ հայ մարզական բոլոր ակումբներն ու խումբերը հաւաքել մէկ դրօշի տակ, շատ- շատեր չհաւատացին այդ երազին իրականացման: Կարելի՞ է որբերէ եւ տարագիրներէ մարմնակրթական շարժում ստեղծել, - հեզնեցին անոնք, պարագայական խանդավառութեան մը վերագրելով Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը:

Չորս տարի ետք, Սեպտեմբեր 1922-ին, երբ Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութիւնը միութիւնը պաշտօնապէս լուծուած յայտարարեց իր բնօրրանին մէջ, մարդիկ չվարանեցան անոր մահը շեփոթելու: Հողին վրայ ուրիշ է, դուրսը կը մեռնի՛, յայտարարեցին անտեղի աճապարանքով մը:

Հ.Մ.Ը.Մ. սակայն չմեռա՛ւ, ապրեցաւ եւ իրմով սերունդներ ապրեցուց: Ապա գրաւը դրին ժամանակի եւ միջավայրի պայմաններուն վրայ, ենթադրելով որ տարիներն ու շրջապատի ազդեցութիւնները կրնան տկարացնել Հ.Մ.Ը.Մ.ը:

Խանդավառութիւնը երկար չի տեւեր, շուտով կը կլանուին տեղական հոգերու մէջ, միութիւն եւ միութենականութիւն կը մոռնան, մտածեցին անոնք պահ մը: Չախողեցա՛ն անոնք նաեւ իրենց գրաւին մէջ:

Դիմեցին ամեն տեսակ ճնշումի եւ հալածանքի. երկրորդ համաշխարհային պատերազմի թոհուրոհին մէջ, տեղ մը մասնաճիւղեր փակեցին, այլ տեղ Հ.Մ.Ը.Մ.ականներ աքսորավայր առաջնորդեցին, մէկ ուրիշ տեղ «հրաժարականներու» բեմադրութիւն սարքեցին:

Բայց դարձեա՛լ չյաջողեցան

Ընդհակառակն, Հ.Մ.Ը.Մ. տարուէ տարի աւելի մեծցաւ, հզօրացաւ եւ ինքզինք պարտադրող ներկայութեամբ նախ՝ Մերձաւոր Արեւելեան մակարդակի կառոյցով օժտուեցաւ, ապա՝ համազաղութային տեսք ու մարմին ստացաւ, դեր ու առաքելութիւն ստանձնեց:

Վրայ հասան Միջին Արեւելեան երկիրներու քաղաքական ցնցումները. մեծաթիւ հայեր աւանդական գաղութներէ տեղափոխուեցան արեւմտեան նոր ուստաններ: Տեղափոխուողներու շարքին էին մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ նախկին լիբանանահայեր, սուրիահայեր, իրաքահայեր թէ այլ: Յոռետեսական նախատեսութիւնները այս անգամ եւս չուշացան, կարծելով որ երրորդ սերունդի Հ.Մ.Ը.Մ.ականները չեն կրնար ապրեցնել միութիւնը: Անպայման կ'այլասերին ու կը ձուլուին, նկատել տուին շատերը:





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսողական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տոն / Լրատու / Այսօր



Հ.Մ.Ը.Մ. սակայն ապրեցաւ ու զարգացաւ ո՛չ միայն երրորդ, այլեւ՝ չորրորդ եւ հինգերորդ սերունդի Հ.Մ.Ը.Մ.ականներու հետ, որոնք միութիւնը պահեցին կանգուն եւ կենսունակ: Աւելի՛ն, Հ.Մ.Ը.Մ. թափ առաւ եւ վերընձիւղուեցաւ Հայաստանի մէջ, արմատներ նետեց Ստեփանակերտի, Թիֆլիսի եւ Մոսկուայի մէջ: Դարձաւ համահայկական երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը՝ իր թիւով, աշխարհագրական տարածումով եւ գործունէութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնն է այս, զոր պարտաւոր է ճանչնալ միութեան նոր միացող թէ արդէն անդամ իւրաքանչիւր հայորդի: Հանգրուան առ հանգրուան, կամաւոր աշխատանքով եւ անսահման զոհաբերութեամբ կերտուած պատմութիւն մը, որուն իւրաքանչիւր էջին վրայ կայ ամբողջ սերունդի մը ջանքն ու ճիգը՝ ապրելու մարդկօրէն առողջ, հայօրէն աննահանջ եւ հաւաքականօրէն գիտակից ու կազմակերպ կեանքով:

Հ.Մ.Ը.Մ.ի այս պատմութիւնը անցեալին չի պատկանիր միայն: Անցեալին պատահած դէպքերը հետքեր կը ձգեն յիշողութիւններու եւ արձանագրութիւններու մէջ: Այդ հետքերը երբ քով-քովի կը բերուին, կրնան վերակազմուիլ, վերակենդանանալ եւ պատմութեան վերածուիլ: Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը միութեան անցեալին վերակառուցումն է, վերակենդանացումն է, գիտնալու համար, թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ի անցեալէն ստեղծուեցաւ ներկան: Ի՞նչ է այդ ներկան եւ ո՛ր է անոր տեղը այսօրուան աշխարհին մէջ, մեր ժողովուրդի կեանքին եւ ապրած օրերուն մէջ:

Պատահական որեւէ միութեան պատմութեան չի նմանիր Հ.Մ.Ը.Մ.ի հաւաքական կենսագրութիւնը: Ճանչնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կը նշանակէ ծանօթանալ հաւատքի հսկաներու, որոնք երբեք դիւրին ճամբաներէ չքալեցին: Տկարութիւն չճանչցան, այլ՝ հաստատ մնացին իրենց համոզումներուն մէջ, ինքնավստահ՝ իրենց քայլերուն մէջ: Չվախցան նորութիւններէ, չմերժեցին նորերը:

Ճանչնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կ'ենթադրէ ճանչնալ մենք մեզ, մեր միութեան իրագործումները եւ զանոնք կերտող խոնարհները, որոնք իրենց կեանքով փաստը տուին, թէ ինչպէ՛ս կարելի է կրաւորականութիւնը փոխարինել նախաձեռնութեան ոգիով, համակերպուածութիւնը՝ մարտահրաւերներ դիմագրաւելու քաջութեամբ, իսկ ինքնագոհութիւնը՝ մնայուն կատարելագործման ձգտումով:

Ճանչնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կը նշանակէ մանաւա՛նդ ծանօթ ըլլալ միութեան նպատակին, որուն իրագործման համար տեւական վազք մը եղաւ միութեան կեանքը՝ ի խնդիր նորահաս սերունդներու մարդկային, ընկերային եւ ազգային առողջ դաստիարակութեան:

Վերջապէս, ճանչնալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կը նշանակէ հաղորդուիլ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական, միութենական ու բարոյական այն բոլոր արժէքներուն հետ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականի իսկական դիմագիծն ու ինքնութիւնը կը կերտեն եւ զայն արժանի կրողը կը դարձնեն այս միութեան 103 տարիներու հարուստ անցեալին, վաստակին ու փառքին :



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսումական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր



ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՅԱՆՔ Հ.Մ.Ը.Մ.Ի 103-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Homenetmen - ՀՄԸՄ

2 Փետրուար 2022

Հ.Մ.Ը.Մ.Ի 103-ԱՄԵԱԿԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՅԱՆՔԻ ԱՐԴԻԻՆՔՆԵՐՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ «ՀԱՅ ՄԿԱՌԻՏԻ ՕՐ»Ը՝ 24 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի 103-ամեակի լուսանկարչական մրցանքը, որ յայտարարուած էր 16 Նոյեմբեր 2021-ին՝ միութեան հիմնադրութեան տարեդարձին օրը, իր աւարտին կը հասնի շուտով: Մրցանքին մասնակցելու վերջին պայմանաժամն է 20 Փետրուար 2022-ը, որովհետեւ արդիւնքներուն հրապարակումը ընկերային ցանցերով պիտի կատարուի «Հայ սկսումի օր»ը՝ 24 Փետրուարին:

Յայտնենք, որ այս առիթով Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կողմէ ստեղծուած է դատական յատուկ կազմ մը, որուն մաս կը կազմեն լուսանկարիչ Բաֆֆի Պերպերեան, բեմադրիչներ Յակոբ Տէր Ղուկասեան եւ Ծովիկ Թորիկեան, արուեստագէտ Արա Ազատ, ինչպէս նաեւ կազմակերպիչ յանձնախումբին կողմէ՝ խմբագիր Նորա Բարսեղեան, նկարչական թեքնիք աշխատանքներու մասնագէտներ Դավար Մազլումեան եւ Նժդէհ Մկրտիչեան:

Մրցանքին առաջին երեք դիրքերը գրաւող մասնակիցները կ'արժանանան հետեւեալ մրցանակներուն.-

⇒ Առաջին մրցանակ.- 1000 ամերիկեան տոլար արժողութեամբ «CANON» վաճառանիշով լուսանկարչական մեքենայ մը:



Միություն

Պատմական

Լրատու

Սկսումսական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

- ⇒ Երկրորդ մրցանակ.- 300 ամերիկեան տոլար արժողութեամբ լուսանկարչական քամերայի portable tripod մը եւ պայուսակ մը:
- ⇒ Երրորդ մրցանակ.- Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը յաւերժացնող արժէքաւոր ժամացոյց մը՝ յատուկ հաստատագիրով:
- Երեք մրցանակակիրները կը ստանան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի մէկ տարուան բաժանորդագրութիւն:
- Մրցանքին մասնակցութեան պայմաններն են.-
- Ա) Մրցանքին կրնան մասնակցիլ 18 տարեկանէն վեր Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ ոչ-Հ.Մ.Ը.Մ.ականներ:
- Արհեստավարժ լուսանկարիչներ չեն կրնար մասնակցիլ սիրողական նկարիչներու համար նախատեսուած այս մրցանքին:
- Բ) Մրցանքին թեման է՝ «Հ.Մ.Ը.Մ.ի առօրեան»: Հետեւաբար, մրցանքին կարելի է ներկայացնել Հ.Մ.Ը.Մ.ի սկսումական, մարզական, անդամական, ընկերային, հանրային թէ բարեսիրական գործունէութեան առնչուած որեւէ լուսանկար, որ հարազատօրէն կը ցոլացնէ միութեան կեանքն ու առօրեան:
- Գ) Մրցանքին ներկայացուած լուսանկարները (սեւ-ձերմակ կամ գունաւոր) պայման է որ ըլլան նոր նկարուած եւ մասնագիտական վերամշակումի (Photoshop-ի) չենթարկուած լուսանկարներ:
- Դ) Լուսանկարները կրնան նկարուիլ որակաւոր հրատարակութեան յարմար լուսանկարչական քամերայով եւ բջիջային հեռաձայնով:
- Ե) Լուսանկարները հարկ է ունենան համապատասխան խորագիր:
- Զ) Լուսանկարները պարտին մինչեւ 20 Փետրուար 2022 ուղարկուած ըլլալ մրցանքի կազմակերպիչ յանձնախումբի ե-նամակի հետեւեալ հասցէին՝ Karozchagan@homenetmen.org, նշելով նկարի հեղինակին անուն-մականունը, շրջանը եւ լուսանկարին խորագիրը:





Հ.Ս.Տ.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Սյուր

Homenetmen - ՀՍԸՄ

26 Փետրուար 2022.

Հ.Ս.Տ.Ս.Ի 103-ԱՄԵԱԿԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑԱՆՔԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Հ.Ս.Տ.Ս.ի հիմնադրութեան 103-ամեակին առիթով կազմակերպուած լուսանկարչական մրցանքը անցնող ամիսներուն իր շուրջ ստեղծեց մեծ հետաքրքրութիւն: Մրցանքին կազմակերպիչ յանձնախումբը 23 մասնակիցներէ ստացաւ Հ.Ս.Տ.Ս.ի առօրեան ցոլացնող 93 լուսանկարներ:



Այս առիթով յառաջացած դատական կազմը, որուն մաս կազմեցին լուսանկարիչ Բաֆֆի Պերպերեան, բեմադրիչներ Յակոբ Տէր Ղուկասեան եւ Ծովիկ Թորիկեան, արուեստագէտ Արա Ազատ, խմբագիր Նորա Բարսեղեան, նկարչական թեքնիք աշխատանքներու մասնագէտներ Դալար Մազլումեան եւ Նժդէհ Մկրտիչեան, յետ բազմակողմանի քննութեան, մրցանակակիրներ ճշդեց հետեւեալները.-

Ա. ՄՐՑԱՆԱԿ

Թալին Մանուէլեան, Լոնտոնէն, «Իրարու օգնել» խորագրեալ նկարին համար: Մրցանակ՝ 1000 ամերիկեան տոլար արժողութեամբ «CANON» վաճառանիշով և լուսանկարչական մեքենայ մը:

Բ. ՄՐՑԱՆԱԿ

Շուշի Հեղինեան, Հայաստանէն, «Աշխարհը մանկան աչքերով» խորագրեալ նկարին համար:

Մրցանակ՝ 300 ամերիկեան տոլար արժողութեամբ լուսանկարչական քամերայի portable tripod մը եւ պայուսակ մը:



Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Գ. ՄՐՑԱՆԱԿ

Ժիլի Մանոյեան, Յունաստանէն, «Հ.Մ.Ը.Մ.ական երջանկություն» խորագրեալ նկարին համար:

Մրցանակ՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը յաւերժացնող արժէքաւոր ժամացոյց մը՝ յատուկ հաստատագիրով:

Երեք մրցանակակիրները կ'արժանանան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթի մէկ տարուան բաժանորդագրութեան:



Մրցանքի կազմակերպիչ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբը այս առիթով իր շնորհակալութիւնը կը յայտնէ մրցանքի դատական կազմին, մրցանքին յաջողութեան նպաստած Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններուն, ինչպէս նաեւ՝ բոլոր մասնակիցներուն, որոնք իրենց ռսպնականերով յաւերժացուցին Հ.Մ.Ը.Մ.ական կեանքէն ակնթարթ մը, ձեռնարկ մը կամ դէմք մը:

Մրցանակակիրներու լուսանկարները կը հրապարակուին Հ.Մ.Ը.Մ.ի դիմատետրի էջով եւ «Մարզիկ» պաշտօնաթերթով:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ**



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՄԱՐԶԻԿ 40-րդ տարի, Թիւ 423

- Խմբագրական- Ճանչնա՛լ պատմութիւնը
- Հաղորդագրութիւն- Յարգանքի տուրք - Պատգամներ - Անուանակոչում
- Ձեր կիսատ ձգած սրբազան գործը անաւարտ՝ պիտի շարունակուի- Մարօ Քէշիշեան
- Ապրողները՝ յանուն անմահների- Միլվա Ալլահվերտեան
- Գէորգը՝ երկրորդ կեանքով- Ֆրիտա Գզըլեան-Հաճեան
- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական քարոզչական առցանց Ա. սեմինարը
- Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը մայր հայրենիքի մէջ. 1918-1927 (Ե. մաս)- Յարութ Զէքիճեան
- Մարգարաշտերու կառուցումը հիմք՝ մեր վերականգնումին- Մանուկ Քէօշկերեան
- Հ.Մ.Ը.Մ.ին երկմտանք երբեք արտօնուած չէ- Սերոբ Սահակեան
- Ապտակը- Գէորգ Պետիկեան
- Քոյր Մարալ Մելքոնեանի յիշատակին- Յովսէփ Աւագեան
- Անժամանակ կորուստ (յատուկ բաժին՝ ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան վաղմեռիկ անդամ եղբ. Արմանտօ Թորգոմեանի)
- Բազմաթիւ սերունդներու դաստիարակը՝ եղբ. Մանուէլ Հալլաճեան-Ժան Պէպէճեան
- Եղբ. Մանուէլ Հալլաճեան հայրն ու Հ.Մ.Ը.Մ.ականը- Ժան Հալլաճեան
- Ազնութեան եւ ծառայութեան խորհրդանիշը՝ եղբ. Կարօ Յովակիմեան- Գոհար Ալեանաքեան
- Նուիրաբար ծառայեց, բարձրացաւ եւ բարձրացուց (եղբ. Անդրանիկ Միլիւքճեանի յիշատակին)- Յովիկ Միլահեան
- Ծերանալ մերժող եղբ. Մամուէլ Մկրտիչեանը- Ս. Մահսէրէճեան
- Թիւր կ'ընդգրկէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ (Հայաստան, Յունաստան, Լիբանան, Սուրիա, Եաֆա, Ալմէլօ) 96 էջ





Հ.Մ.Ը.Մ.
Հայ մարմարակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսումական

Մարզական

ՄԱՐԶԻԿ


Տուն / Լրատու / Այսօր

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ԲԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության մարզական յանձնախումբին կազմակերպությամբ, Շաբաթ, 29 Յունուար 2022-ի երեկոյեան ժամը 5-ին (Պէրուրի ժամանակացոյցով), տեղի ունեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու ծանօթացման առցանց հանդիպումը, մասնակցությամբ միութեան տարբեր շրջաններու մարզական 40 պատասխանատուներու, մարզական յանձնախումբի եւ Կեդրոնական Վարչութեան անդամներու, ընդամենը՝ 56 մասնակիցներու:

Հանդիպումին առաջին մասով, մարզական յանձնախումբի անդամ քոյր Մարիա Գեորգեան ներկայացուց համա-Հ.Մ.Ը.Մ.ական առցանց մարզախաղերուն արդիւնքները, որոնց մասնակցած են 95 մարզիկ-մարզիկուհիներ՝ 10 շրջաններէ.- Լիբանան, Սուրիա, Յունաստան, Գանատա, Ֆրանսա, Հարաւային Ամերիկա, Քուէյթ, Միւնիխ, Վեսթերոս եւ Սոտերթելիա:



Երկրորդ մասով, մարզական յանձնախումբի անդամ եղբ. Մեւակ Կարապետեան փաուրը-փոյնթով ներկայացուց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերուն կիրարկուելիք քորոնայի նախագգուշական օրէնքները:

Հանդիպումին երրորդ եւ մեծագոյն մասը յատկացուեցաւ այս ամառ Հայաստանի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու կազմակերպման մանրամասնութիւններուն: Դարձեալ փաուրը-փոյնթով ներկայացուեցան մարզախաղերու թուականները, մասնակցութեան սակերը, արձանագրութեան ձեւերը, պանդոկներու առնչուած դասաւորումները, կիրարկուելիք մարզախաղերը, արեւելումի ծրագիրը, մարզախաղերու կանոնները, «Ջրաշք» մարզախաղերը, մարզախաղերու ընթացքին նկատի առնուած բարեսիրական ու դաստիարակչական աշխատանքները եւ այլեւայլ հարցեր: Նիւթերու ներկայացումները փոխն ի փոխ կատարեցին մարզական յանձնախումբի անդամները եւ միութեան արհետագիտական տեղեկատուութեան (IT) յանձնախումբին ներկայացուցիչը:

Ներկայացուած տեղեկութիւններու շուրջ մասնակիցները ուղղեցին հարցումներ եւ առաջարկներ, որոնք փոխանցուեցան մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին:



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու


Սկսումական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Այս առիթով խօսքեր արտասանեցին մարզական յանձնախումբին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության ներկայացուցիչներին եղբ. Արմանտ Քիլիճեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Եղբ. Քիլիճեան իր գոհունակությունը յայտնեց առցանց հանդիպումին մեծաթիւ մասնակիցներուն համար եւ յոյս յայտնեց, որ շրջանները առիթը կ'ունենան ֆիզիքապէս իրարու հետ ըլլալու Յուլիսին նախատեսուած 11-րդ մարզախաղերուն, որոնց յաջողութեան համար բոլորը մեծ աշխատանք ունին կատարելիք:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան իր խօսքին մեջ նախ յիշեց երկու կորուստներ՝ առաջինը Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի ատենապետին մահը, իսկ երկրորդը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության անդամ եւ մարզական յանձնախումբի մօտ ներկայացուցիչներին եղբ. Արմանտ Թորգոմեանի անժամանակ կորուստը: Ապա, եղբ. Նաճարեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ. օրուան նորություններուն հետ քայլ պահող եւ տեւաբար մարտահրաւերներ դիմագրաւող միություն է, հետեւաբար, ան բնական նկատեց, որ հակառակ աշխարհը հարուածող քորոնայի եւ տնտեսական տագնապներուն, անկարելին կարելի դարձնէ՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր կազմակերպելու եւ մարմնակրթութեան ճամբով սերունդ դաստիարակելու համար: Հ.Մ.Ը.Մ. յանձնառու կը մնայ իր դերակատարութեան եւ մարզախաղերը իբրեւ միջոց օգտագործելով տեւաբար կը ջանայ հայ պատանի-երիտասարդներին կերտել ազգային առողջ դիմագիծով քաղաքացիներ եւ հայեր, եզրափակեց ան:

Շուրջ երեք ժամուան քննարկումներէ ետք, մարզական պատասխանատուներու առցանց հանդիպումը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով:



Հ.Մ.Ը.Մ .ը նաեւ հոգեւոր վեր ընձիւղման կոթող:

Անկեղծ ասած հակառակ որ աւելին քան քառասնամեայ ծառայութիւն ունեցածն եմ Հ.Մ.Ը.Մ.ի անմիջական աշխատանքային տարածքում:

Հակառակ որ մի ժամանակ իսկ, անմիջական որպէս մարզիկ թէ հանդիսատես գտնուածն եմ ոտնագնդակի դաշտերում:

Այնուհետեւ երբեք չեմ հասկացած ու չեմ իսկ հարցուցած՝ թէ մրցաշարքին արդիւնքն ինչն՝ է եղած :

Չեմ իսկ պրպտած թէ խնդրոյ առարկայ խաղն որպէս անմիջական վիճակագրական արդիւնաւորութիւն, ինչն է նշանակած:

Թէկուզ շատին համար այդ թուագրութիւններն շատ բան են նշանակած՝ ինձ համար ցուցատախտակին երեւցածէն աւելին երբեք չեն ըսած: Հետեւաբար ինձ համար սա պահն թէեւ ուրախանալին է, բայց անպայման հետաքրքիրը չէ թէ, Լիբանանի Հ.Մ.Ը.Մ ը իրապէս ինչն՝ աստիճանաւորում է գտած:

Շատն հետաքրքիրն չէ, եթէ երկրորդ թէ երրորդ տեղն է գրաւած: Շատ ալ հետաքրքիրն չէ թէ սա խաղին յաջորդին որո՞ւ է գտնելու Հ.Մ.Ը.Մ ը իր խաղին ընդառաջ:

Արդարեւ ինձ հետաքրքրածն է, խաղին ընթացքն , մարզիկի թէ հանդիսատեսի մօտ ստեղծուած ոգեւորութիւնը, դաշտի վրայ սերունդներու գրկընդխառնումը , կարգապահութիւնը, վեհանձն ու մաքուր խաղը, փոխադարձ հանդուրժողութիւնը, վերջապէս դաշտից ներս թէ դուրս հայուս հպարտանքը թէ ինքնասիրութիւնը շոյող Հ.Մ.Ը.Մ ական մարզիկի դրսեւորումները:

Հետեւաբար ըսեմ:

Եթէ հպարտն եմ իմ մարզիկով:

Հպարտն եմ անոր բացառիկ տեսականիով :

Հպարտն ու երջանիկն եմ նոյն մասնաճիւղի յաղթանակից աւելին, անոր , երիտասարդութեան շարքերից ցոլացող ոգեւորութեամբ թէ խանդով: Հպարտն եմ՝ մանաւանդ այսպիսին սեղմ օրերին , այսպիսին դժուար պահերին, իմ երիտասարդաց սա ոգեւորութեամբ , խանդավառութեամբ , վաղուան յաղթանակների նկատմամբ սա լաւատեսութեամբ ու մասամբ նորին:

Վերջապէս այնպիսիքով ,

որոնք կը խօսին այդ խաղի արդիւնքից շատ վեր ու հեռու յաղթանակների ու ձեռքբերումների մասին:

ԱԽՈՅԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՌԱՒԵԼ

ԱԽՈՅԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՆՈՒԱԶ

ԱՅՐ ՈՉԻՆՉ Է ՆՇԱՆԱԿԵԼՈՒ 105 ԱՄԵԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

ԱՅՍՈՒԱՄԵՆԱՅՆԻ ՄՐՏԱԲՈՒԽ ՇՆՈՐՀԱՌՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ ԲՈԼՈՐԻՆ

ԱՆԲԱՅԱՌ

ՅԱՌԱԶ ՆԱՀԱՏԱԿ ՑԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ ՎԱՌ:



Սերոբ Սահակեան

Հանդիպում SGP կուսակցութեան Եւրօխորհրդարանի անդամ Բերտ-Յան Ռուիսենին և Օվերայսել նահանգի SGP կուսակցութեան պատասխանատուներու հետ:

2022 Փետրուարի 21-ին Ալմելօ հայաշատ քաղաքի մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ SGP կուսակցութեան Եւրօխորհրդարանի անդամ Բերտ-Յան Ռուիսենին և Օվերայսել նահանգի SGP կուսակցութեան պատասխանատուների հետ:

Հանդիպումը կազմակերպուած էր Ալմելօ-ի հայ առաքելական եկեղեցոյ խորհրդի նախագահ Օննիկ Գելիջիի նախաձեռնութեամբ եւ ներկայ էին Նեդոլանդներու ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն Տիգրան Բալայանը եւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ (նշենք , Նեդոլանդներու ՀՅԴ Հայ Դատի յանձնախումբը եւ ՀՕՄ ի մասնաճիւղը) : ՀՄԸՄ Ալմելօ-ի մեկուսի շրջանէն ներկայացաւ եղբ Նուպար Մարտիրոսեանը :

Հանդիպմանը քննարկուեցին Ադրբեջանի իշխանութիւններու ապօրինի գործողութիւններու կասեցումը , հայ ռազմագերիների վերադարձման և հայկական ժառանգութեան պահպանման հարցեր:

Աւարտին դեսպան Բալայանը այցելեց նաև ՀՄԸՄ Ալմելօ-ի նորակառոյց շէնքի հրապարակը եւ ծանօթացաւ կառուցման աշխատանքներու աւարտական փուլին:



Հայ Սկաուտի օր



Կիրակի 6 Մարտ 2022 Թ-ին , առաջին անգամ ելլալով Հ.Մ.Ը.Մ. Ալմելո Մեկուսի Շրջանի նորակառույց սրահին ներս տեղի ունեցաւ Հայ Սկաուտի Օրուան տարեկան տօնակատարութիւնը : Օրուայ ձեռնարկին ներկայ գտնուեցան Ալմելո-ի Ս.Գրիգոր լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Մաշտոց քահանայ Պաղտասարեան , Եկեղեցւոյ վարչութեան ներկայացուցիչ Պր. Օննիկ Գելեջի , հիւրեր , միութեանս քոյրեր եւ եղբայրներ :



Սկաուտները տողանցքով սրահին ներս մուտք գործելէ ետք տեղի ունեցաւ դրօշակներու բարձրացման արարողութիւն որու աւարտին բեմ հրաւիրուեցաւ Հոգեւոր Հայրը (ըստ միութեանս բոլոր ձեռնարկներուն) Տէրունական աղօթքով բացումը յայտարարելու օրուայ յայտագրին :



Օրուայ խօսքը ներկայացուց միութեանս սկաուտական խորհուրդի ատենապետ Եղբ. Սեւան Կորիսեանը , շեշտելով Հայ սկաուտի օրուայ իմաստը , խորհուրդը եւ արժեքաւորումը :



Օրուայ խօսքը ներկայացուց միութեանս սկաուտական խորհուրդի ատենապետ Եդր. Մեւան Կորիսեանը , շեշտելով Հայ սկաուտի օրուայ իմաստը , խորհուրդը եւ արժեքաւորումը :



Ապա տեղի ունեցաւ խմբապետներու աստիճանաւորման փոխանցման եւ Արի-Արեւնուշի խոստման արարողութիւնները եւ մուկլիկներու փողկապներու բաժանումի փոխանցում ուր .-



- Եդր. Ռազմիկ Արամեան , Քոյր Մարիամ Միխիթարեան եւ Քոյր Թանեա Աղօմեան ստացան խմբապետի աստիճանը :
- Քոյր Մարգրիտ Գորգիսեան ստացաւ Արի/Արեւնուշ փոխ խմբապետի աստիճանը.
- Քոյր Քրիստին Օգջեան եւ Եդր. Արազ Հրայր ստացան խումբի Վարիչ Առաջնորդի պաշտօնները :



-Քոյր Քրիստին Օգջեան , Եղբ. Արագ Հրայր , քոյր Նայիրի Մովսեսեան եւ քոյր Լուսեա Արասդակեւ ստացան Բ. Կարգի վկայագիրներ:



Կոկիկ մշակութային յայտագիր մը պատրաստած էին մեր սկաուտ-երը , ներկայացնելէն վերջ, պատրաստուած աւանդական ոսպով ճաշը օրինեց Տէր Մաշտոց Քահանայ Պաղտասարեանը , եւ բաժանուեցաւ ներկաներուն որոնք վայելեցին համեղ ճաշը :





Սրահի ոտնագնդակի մրցաշարը

Սեպտեմբերին վերսկսեցին ֆութբալի KNVB շրջանային մրցաշարը : Միութեանս մարզըիկները աս տարի ալ կը մասնակցին մրցաշարի 3րդ քաջանմունքի -աստիճանի խմբերի հետ, փորձելով արձանագրել լաւագոյն արդիւնքներ:

Ստորեւ Միութեանս խմբի կայացած խաղերի արդիւնքները:

1-25-2-2022 EZV 2 vs Homentmen 1 - 4

2- 25-3-2022 Homentmen vs EZV 2 8-11



Together we build the future

*Just a little longer and it's time! Donate and together we will
get through the last stretch!*

Dear compatriot , brothers and sisters,

*The construction of our new association building is almost at its
end! In order to realize the project, however, additional (and unexpected) costs have to be
covered. These costs have arisen gradually and were not known beforehand.
Once again we appeal to you and ask for your generous donations to successfully realize the
project of our new association building.*

*Donations can be made by bank transfer to the following account number:
EN 83 RABO 01 0335 3683 for the Homenetmen foundation o. v.v v.v v.v "*

Donation New Build Homenetmen "

For cash donations please contact 06-86 142 355

***Together we
build the future*** ♥



Հանդիպում Chrsiten Unie (CU) կուսակցութեան Պրն. Gert Jan Segers ի հետ:

28 Յունուար 2022 -Ալմէլօ



Յունուար 28. 2022 Թ.-ին Ալմէլօ հայաշատ քաղաքի մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Chrsiten Unie (CU) կուսակցութեան Պրն. Gert Jan Segers ի հետ:

Հանդիպումը կազմակերպուած էր Ալմէլօ-ի հայ առաքելական եկեղեցոյ խորհրդի նախագահ Օննիկ Գելիջի-ի նախաձեռնութեամբ եւ ներկայ էին Ամէլօ-ի մէջ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչները(նշենք , Նեղուհանդերու ՀՅԴ Հայ Դատի յանձնախումբը եւ ՀՕՄ ի մասնաճիւղը) : ՀՄԸՄ Ալմէլօ-էն ներկայացաւ եղբ Կարդան Պողոսեանը :

Հանդիպմանը քննարկուեցին Հոլանդահայ համայնքի յուզող հարցերը եւ տարիներ շարունակ կուսակցութեան արդիւնաւէտ ներդրումը աս հարցերու մէջ :



Ներդրանդներու աւագանիներու ընտրութիւններ

13-15 մարտ 2022 Թ.-ին տեղի ունեցաւ Ներդրանդներու մէջ աւագանիներու ընտրութիւնները: Ալմելօ հայաշատ քաղաքը իր մասնակցութիւնը բերաւ օրուայ քուէարկութեան իր երիտասարդ թեկնածուներով:

Քուէարկութեան աւարտին ընտրուեցան հայ թեկնածուներէն ՀՄԸՄ Ալմելօ-ի անդամ եղբ. Ռուբէն Գելիճին Lokaal Amrlo Central կուսակցութեան ներկայացուցիչ Եւ Օր. Ռիթա Աւանեսեանը ԿՍ կուսակցութեան ներկայացուցիչ:

Մեր շնորհաւորանքները եղբ. Ռուբէնին յուսալու արդիւնաւէտ ծառայութիւն հայ համայնքին եւ ի մասնաւորի մեր ՀՄԸՄ-ին :



Հանդիպում Գերաշնորհ Տէր Խաժակ Արքեպ. Պարսամեանի հետ

Շաբաթ 26 Մարտ 2022 Թ. Ալմելօ-ի Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահէն ներս , տեղի ունեցաւ հայրական հանդիպում Գերաշնորհ Տէր Խաժակ Արքեպ. Պարսամեանի եւ Ալմելօ քաղաքի մէջ գործող հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներումիջեւ:

Օրուայ հանդիպման քննարկուեցաւ Ալմելօ հայ համայնքի եւ հայ Առաքելական եկեղեցւոյ հաւատացեալներու յուզող հարցերը

Օրուայ ձեռնարկին ներկայացան միութեանս վարչութեան անդամները եղբ.Օհաննէս Օհաննէսեան եւ Եղբ. Բաֆֆի Թերեզեան:



ՄԻՋԻՆՔ ԵՒ ՊԻՆԿՕ

Այսօր 26 մարտ 2022

Միութեանս անդամները կազմակերպած էին աւանդական Մեծ Պահքի "Միջինքը" :

Տիկնած յանձնախմբի կողմէ համեղ ուտեստեղէններով եւ խմորեղէնով պատրաստուած սեղանը օրինեց Գերաշնորհ Տէր Խաժակ Արքեպ. Պարսամեանը. ապա ներկաները վայելեցին անուշ ախորժակով համեղ ուտելիքները:

Փոքր երեխաներու եւ սկաուտներու համար պատրաստուած էր դիմակներու եւ ծպտուած զգեստներու մրցում մը, եւ լաւագոյն ծպտուած փոքրիկներուն տրուեցան նուէրները :

Երեկոն աւարտուեց BINGO խաղով:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ⇒ Ժամկետը հասնելու է.
- ⇒ Խմբակարական ,Մարզիկ Ե–ի թիւ 423 .Ճանաչնալ Պատմութիւնը.
- ⇒ Հ.Ս.Ը.Մ-ի 103 ամեակի լուսանկարչական մրցանք.
- ⇒ Հ.Ս.Ը.Մ-ի 103 ամեակի լուսանկարչական մրցանքի արդիւնքները.
- ⇒ Լոյս տեսաւ.
- ⇒ Համա-Հ.Ս.Ը.Մ.-ական 11-րդ մարզախաղերու առցանց հանդիպում.
- ⇒ Հ.Ս.Ը.Մ. ը նաեւ հոգեւոր վեր ընձիւղման կոթող .
- ⇒ Հանդիպում SGP
- ⇒ Հայ Սկսուտի Օր.
- ⇒ Մարզական Լուրեր.
- ⇒ Հանդիպում CU
- ⇒ Ներդրանդներու աւագանիներու ընտրութիւններ
- ⇒ Հանդիպում Գերաշնորհ Տեր Խաժակ Արքեպ. Պարսամեանի հետ
- ⇒ Միջինք .
- ⇒ Բովանդակութիւն

Կայք էջ . Website : homenetmenalmelo@yahoo.nl
: <https://stichtinghomenetmen.nl/>

Facebook : [Homenetmen Almelo / ՀՍԸՄ Ալմելօ](#)

Instagram : [homenetmenalmelo](#) 

Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել homenetmenalmelo@yahoo.nl ու/